Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

-641-

ԲԳԿԲ ՔԱՂ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱԳԻՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱԺԻՆ

9(47):323.2]:355.51

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Հոկտեմբերյան Հեղափոխության 15-րդ տարեդարձի տոնակատարությունը ԲԳԿԲ զորամասերում նախապատրաստելու և անցկացնելու մասին

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1932

9(47):323.2]:355.51

6 NOV 2017

II-26118գր

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԳԿԲ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձի տոնակատարության հետ կապված ագիտացիոն-մասսայական աշխատանքների բովանդակությունը լիովին վորոշվում է միջազգային դրությամբ, սոցիալիստական շինարարության հերթական խնդիրներով, կուսակցության Կենտկոմի վերջին պլենումի վորոշումներով, Կարմիր բանակի մարտունակությունն ամրացնելու հիմնական խնդիրներով և տարեդարձի մասին կուսակցության Կենտկոմի լոզունգներով:*

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի տոնակատարության նախապատրաստական աշխատանքը չի կարող սահմանափակվել միայն կազմակերպչական միջոցառումներով (պլանի) մշակում, տարեդարձի առթիվ յերեկույթներ կազմակերպելով և այլն), այլ պետք է դրա հետ միասին իր մեջ առնի նաև ագիտացիոն-մասսայական աշխատանքների մի ամբողջ սիստեմ, վորը պետք է ուղղված լինի պարզաբանելու կարմիր բանակայիններին և պետկազմին միջազգային դրությունը, սոցիալիստական շինարարության նվաճումներն ու հերթական խնդիրները, հատկապես Կենտկոմի վերջին պլենումի վորոշումները և լուծելու Կարմիր բանակի մարտունակության ամրացման կարևորագույն խնդիրները: Այդ խնդիրը լուծել կարելի յե միայն այն պայմանով, յեթե տարեդարձի տոնակատարության ամբողջ նախապատրաստական աշխատանքը հագեցված կլինի շատ թե քիչ տևական ժամանակի համար նախատեսված ագիտացիոն-մասսայական միջոցառումներով:

Այստեղից պետք է հետևցնել, վոր տոնակատարության նախապատրաստումը զորամասերում պետք է ծավալվի ծայրահեղ դեպքում տարեդարձից մի ամիս առաջ և տարվի խիստ մտածված պլանով:

Այս նամակում առաջադրվող՝ տարեդարձի նախապատրաստա-

ման և անցկացման ձևերն ու մեթոդները լիովին բղխում են ՊՈԽՌ-ի № 23529 դիրեկտիվից և նախատեսված են իրագործելու հոկտեմբեր ամսվա և նոյեմբերի առաջին ութ օրերի ընթացքում:

## ՍՏՈՒՅԳ ՅԵՎ ԼԱՎ ՄՇԱԿՎԱԾ ՊԼԱՆԻ ՀԱՄԱՐ

*Տոնակատարության անցկացման նախապատրաստական աշխատանքներում զորամասերի կուսակցական կազմակերպությունների առաջին գործնական խնդիրը կայանում է նրանում, վոր կազմեն վորոշակի, լավ մտածված (ըստ բովանդակության, ըստ մեթոդների և ըստ ժամանակի) պլան, վորը պետք է հետո ընկած լինի հոկտեմբեր ամսվա և նոյեմբերի առաջին ութ օրվա կուսակցական-քաղաքական աշխատանքների հիմքում:*

*Պլանի նախնական մշակումը պետք է հանձնարարված լինի հատուկ հանձնաժողովի, վորի կազմում պետք է լինեն զորամասի կուսակցական բյուրոյի բոլոր սեկտորների ղեկավարները: Զորամասի ընդհանուր պլանի հիման վրա պետք է մշակված լինեն նույնպես տոնակատարության նախապատրաստման և անցկացման պլաններ վաշտերում:*

*Տարեդարձի նախապատրաստման և անցկացման պլանը պետք է իր մեջ բովանդակի—*

1. *Աշխատանքը զորամասի կուսկազմակերպության ներսում.*
2. *Աշխատանքը կոմսոմոլի կազմակերպության մեջ.*
3. *Աշխատանքը պետկազմի մեջ.*
4. *Աշխատանքը պետկազմի ընտանիքների մեջ.*
5. *Աշխատանքը կ. բանակայինների մեջ.*
6. *Ընդհանուր գնդային միջոցառումներ («կարմիր զորանոցի» ստուգատես, ռացիոնալիզատորական և գյուտարարական առաջարկների հավաքում և այլն):*
7. *Ագիտացիոն-մասսայական աշխատանքներ և կարմիր բանակայինների ու պետկազմի կուլտուրական սպասարկում տարեդարձի տոնակատարության օրերին (նոյեմբերի 6-ին, 7-ին և 8-ին):*

*Պլանով նախատեսված այն բոլոր միջոցառումները, վորոնք կապված են շեֆական և յենթաշեֆ կազմակերպությունների մասնակցության հետ, պետք է նախորոք համաձայնեցված լինեն նրանց հետ՝ նրանց ներկայացուցիչներին պլանի մշակմանը մասնակից դարձնելու ճանապարհով:*

*Պլանը կազմելու համար հիմնական ղեկավար փաստաթղթեր պետք է լինեն—*

1. *ՊՈԽՌ-ի № 23529 դիրեկտիվը.*
2. *Լենինգրադի բանվորների նամակը («Պրավդա» № 236 ս. թ.).*
3. *«Կրասնայա Զվեզդայի» առաջնորդող հոդվածները (№ № 212 և 227).*



*Մշակված պլանը պետք է քննության դնել կուսբյուրոյում և ինֆորմացիայի կարգով մտցնել հերթական կուսակցական ժողովում: Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի տոնակատարության պլանը պետք է քննարկվի վաշտային կարմիր բանակային ժողովներում և պետկազմի ժողովներում: Պետկազմի կանանց հետ պետք է քննվի պլանի այն մասը, վոր վերաբերում է նրանց:*

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ ՅԵՎ ԿՈՄՍՈՄՈԼՈՒՄ

*Միայն այն կուսկազմակերպությունը կարող է հոկտեմբերյան լոզունգները տանել մասսաների մեջ, վորը կկարողանա կուսակցության յուրաքանչյուր անդամի ու թեկնածուի և կոմյերիտականի զինել առ տարեդարձն դասավորված միջազգային և ներքին դրության, կուսակցության և յերկրի առաջ կանգնած՝ սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների վորոշակի ըմբռնումով և Հոկտեմբերի հաղթանակի համար մեր կուսակցության մղած պայքարի պատմությունը գիտենալով: Ահա թե ինչու հոկտեմբերի տարեդարձի ամբողջ նախապատրաստությունը պետք է ներփակի իր մեջ (վորպես առաջնակարգ միջոցառում) ներկուսակցական աշխատանքների լայն ծավալում՝ տոնակատարության խնդիրների հիման վրա:*

*Ներկուսակցական աշխատանքների բնագավառում, տոնակատարության առընչությամբ յուրաքանչյուր կուսկազմակերպություն պետք է ձեռնարկի հետևյալ նվազագույն միջոցառումները.—*

1. *Կուսկազմակերպության ժողովում (կոմսոմոլի մասնակցությամբ)՝ դնել զեկուցում «Պայքարի և հաղթանակների 15 տարի» նյութի մասին (կուսակցության պայքարը Հոկտեմբերի հաղթանակի և գլխավոր գծի համար սոցիալիստական շինարարության մեջ. Կենտկոմի վերջին պլենումի վորոշումներով առաջադրված՝ կուսակցության հերթական խնդիրները):*

*Այդ ժողովում վորպես զեկուցող պետք է առաջադրել մի վորակյալ ագիտատոր տեղական կուսկազմակերպությունից կամ քաղորգանից:*

*Նույնպիսի զեկուցում պետք է դնել նաև կոմսոմոլի կազմակերպության ժողովում.*

2. *Հոկտեմբեր ամսվա ընթացքում «թեկնածուի օրեր» հատկացնել ծանոթացնելու համար կուսակցության թեկնածուներին Կենտկոմի վերջին պլենումի վորոշումներին, Հոկտեմբերի հաղթանակի համար, սոցիալիստական շինարարության մեջ գլխավոր գծի համար կուսակցության մղած պայքարին և բոլշևիզմի հեղափոխական տրադիցիաները թեկնածուներին փոխանցելու համար:*

Այդ «Թեկնածուների օրերը» լավագույն կուսակցական ուժերով ապահովելու համար կուսբյուրոների կազմակերպիչները պետք է կապվեն տեղական կուսակցական կոմիտեների հետ և նրանց մասնակցությամբ այդ աշխատանքի համար ջոկեն Հոկտեմբերյան հեղափոխության մասնակցած—հին բոլշևիկների կադրեր:

Հոկտեմբերի տարեդարձը տոնելու մասին ՊՈԽՌ–ի դիրեկտիվը «Թեկնածուի օրերի» համար առաջարկում հետևյալ թեմաները—

ա) սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները (հատկապես Կենտկոմի վերջին պլենումի վորոշումները).

բ) կուսակցության տակտիկան Հոկտեմբերին.

գ) բոլշևիկյան կարգապահության մասին.

դ) կուսակցությունը քաղաքացիական պատերազմի ճակատներում.

յե) կուսակցության պայքարը յերկու ճակատի վրա:

«Թեկնածուի օրերի» մեթոդներն ու ձևերը կարող են լինել միանգամայն զանազանակերպ (զրույցներ, հին բոլշևիկների հիշողություններ, էքսկուրսիաներ դեպի հեղափոխության տեղական թանգարանը և այլն): Պետք է վճռականապես հրաժարվել չոր դեկուցումներից: Ամենից լավ է, յեթե հաջողվի «Թեկնածուի օրն» անցկացնելու ներգրավել միաժամանակ մի քանի (յերկու–յերեք) հին բոլշևիկների, վորոնցից յուրաքանչյուրն իր վրա կվերցնի մի վորևէ հարց: Յուրաքանչյուր «Թեկնածուի օրվա» համար պետք է տարված լինի մանրազնին նախապատրաստում հետևյալ ճանապարհով—

ա) հայտարարելով «օրվա» թեման լենինկյուտում.

բ) հանձնարարելով գրականություն «օրվա» թեմայի շուրջ.

գ) մասսայականացնելով «Թեկնածուի օրն» անցկացնելու համար ներգրավված հին բոլշևիկներին (լենինկյուտներում պատի թերթերում զետեղելով նրանց նկարներն ու կենսագրությունը).

դ) նախորոք հավաքելով թեկնածուների՝ կողմից հին բոլշևիկներին տրվելիք հարցերը:

3. Կոմյերիտականների մեջ բոլշևիկյան տրադիցիաների պրոպագանդայի համար դնդային մասշտաբով անցկացնել հատուկ՝ «Յերկու սերունդի յերեկոներ»—կոմյերիտականների և հին բոլշևիկների:

Այդ յերեկույթները պետք է շատ խնամքով նախապատրաստվեն: Դրանց մասնակցելու համար պետք է ներգրավել ինչպես զորամասի, նույնպես և տեղական կուսկազմակերպությունից Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական պատերազմի մասնակից—հին բոլշևիկներին. յերեկույթի կարգը պետք է կառուցված լինի մոտավորապես հետևյալ կերպ—

ա) զորամասի կոմիսարի բացման խոսքը յերեկույթի նշանակության մասին.



բ) Հին բոլշևիկների և նախկին քաղաքական աքսորականների հիշողությունները Հոկտեմբերի հաղթանակի համար կուսակցության մղած պայքարի մասին, բոլշևիկյան դիսցիպլինայի մասին, սոցիալիստական շինարարության մեջ կուսակցության գլխավոր գծի համար յերկու ճակատի վրա մղած պայքարի մասին:

գ) Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական պատերազմի մասնակից-կոմունիստների յելույթը «ինչպիսին պետք է լինի կարմիր բանակի կոմյերիտականը» նյութի մասին:

Յերեկույթը հարկավոր է կազմակերպել այնպես, վոր նրա ընդմիջումներին, ինչպես նաև նրա վերջում, կարելի լինի հին բոլշևիկների կողմից զրույցներ անցկացնել փոքր խմբերով կոմյերիտականների հետ: Դրա համար հարկավոր է վաղօրոք պատրաստել ակումբային սենյակները, կամ յերեկույթը դնդային ակումբում վերջացնելուց հետո, շարունակել յերեկույթը լենինկյուտներում հին բոլշևիկների կողմից կոմյերիտականների հետ ունեցած զրույցներով:

Ակումբի շենքն այդ յերեկույթի առթիվ հարկավոր է զարդարել լոզունգներով այսպիսի թեմաների շուրջը՝ «Կոմյերիտական. յեղիր բոլշևիզմի հեղափոխական տրադիցիաների արժանավոր կրողը: Հին բոլշևիկյան սերնդի կողմից՝ Հոկտեմբերի հաղթանակի ու նվաճումների ամրացման համար մղած պայքարի օրինակներով սովորիր մարտնչել սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար»:

4. Նախապատրաստել ու ներգրավել ագիտ–մասսայական աշխատանքին տարեդարձի առթիվ ագիտատորների ու ընթերցիչների ստորին կադրեր: Դրա համար պետք է.

ա) անցկացնել հրահանգչական հատուկ պարապմունք ստորին ագիտատորների ու ընթերցիչների հետ՝ «Հոկտեմբերի 15–րդ տարեդարձը ստորին ագիտատորի խնդիրները» թեմայով.

բ) մշակել և բաժանել ստորին ագիտատորներին հուշատետր, վորի մեջ պետք է թվարկված լինեն կարմիր բանակայինների հետ տրվելիք զրույցների կոնկրետ հարցերը.

գ) տալ յուրաքանչյուր ստորին ագիտատորին հատուկ ընտրված գրականություն ագիտատորի աշխատանքին օգնելու համար՝ կապված տարեդարձի ու Կենտկոմի վերջին պլենումի վորոշումների հետ.

դ) ընթերցիչների աշխատանքի մեջ մտցնել տոնակատարության նախապատրաստության խնդիրների և ընթացքի մասին լրագրային նյութերի պարտադիր ընթերցումը:

Ստորին կուսբջիջները պետք է կազմակերպեն ստորին ագիտատորների մանրազնին ու կանոնավոր հրահանգում՝ կարմիր բանակայինների հետ տարվող նրանց աշխատանքի կոնկրետ հարցերի վերաբերյալ:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի առթիվ պետկազմի հետ կուսկազմակերպությունները ու քաղմարմինները պետք է կազմակերպեն իր բովանդակությամբ խորն ու իր վորակով բարձրորակ հատուկ աշխատանք, նայելով այդ աշխատանքի վրա, վորպես ագիտմասսայական աշխատանքի կարևորագույն բնագավառի:

Ամբողջ նախապատրաստական շրջանի ընթացքում քաղմարմինները պետք է կազմակերպեն պետկազմի համար (կայազորային մասշտաբով) տեղական կուսկազմակերպությունների վորակյալ զեկուցողների ու դասախոսների ուժերով 2–3 զեկուցում (դասախոսություն), մոտավորապես հետևյալ թեմաներով.

ա) բոլշևիկների տակտիկան Հոկտեմբերին (Հոկտեմբերյան հեղափոխության բնույթն ու շարժիչ ուժերը, կուսակցության տակտիկան գյուղացիության նկատմամբ: Պայքարը յերկու ճակատով, ընդդեմ «աջերի» ոպոզիցիայի (Կամենև) և ընդդեմ «ձախերի» (Բոգդատյեվ): Կուսակցության պայքարը շտրեյկբրեխերության դեմ Հոկտեմբերի նախօրեյին (Զինովյեվ, Կամենև և այլն): Զինված ապստամբության տակտիկան: Կուսակցության դերի տրոցկիստական խեղաթյուրումը Հոկտեմբերի նախապատրաստության շրջանում («Հոկտեմբերի դասերը») և այլն):

բ) ԽՍՀՄ միջազգային դրությունը Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին և Կարմիր բանակի խնդիրները.

գ) ԽՍՀՄ Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին (սոցիալիստական շինարարության նվաճումներն ու խնդիրները Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին): Զեկուցումը պետք է ուղղված լինի գլխավորապես պարզաբանելու համար պետկազմին կենտկոմի վերջին պլենումի վորոշումները:

ԿԲՏ և անմիջորեն զորամասերում հարկավոր է կազմակերպել կոնսուլտացիոն կետեր, վորտեղ պետկազմը կարողանա ստանալ վորակյալ խորհուրդ ու տեղեկանք յուրաքանչյուր այն հարցին, վոր վերաբերում է տարեդարձի առթիվ ագիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքին:

Ոգտակար է նույնպես տպագրել ու պետկազմի մեջ բաշխել տարեդարձի առթիվ գրականության հանձնարարական ցուցակները (վորի թվում նաև գեղարվեստական գրականությունը) և կարմիր բանակայինների հետ տարվելիք զրույցների մոտավոր թեմաները:

Տարեդարձի առթիվ պետկազմի հետ տարվելիք աշխատանքի մեջ հիմնական մասսայական միջոցառումը պետք է լինի յուրաքանչյուր կայազորում Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակիցների ու պետկազմի հանդիպման յերեկույթների կազմակերպումը:



Այդ յերեկույթների հիմնական բովանդակությունը պետք է կազմի Հոկտեմբերի հաղթանակի համար կուսակցության մղած պայքարի պատմության պրոպագանդը և սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների պրոպագանդը: Այդպիսի յերեկույթ կազմակերպելու համար քաղմարմինները պետք է կապվեն հին բոլշևիկների ընկերության և նախկին քաղտաժանակիրների ընկերության տեղական բաժանմունքների հետ և նրանց հետ միասին մշակեն յերեկույթի ծրագիրը: Յերեկույթին ակտիվ մասնակցելու պետք է ներգրավել նույնպես քաղաքացիական պատերազմին մասնակցած հին հրամանատարներին՝ յերիտասարդ հրամանատարներին փոխանցելու համար մարտական տրադիցիաները:

Վերջապես՝ հարկավոր է հոգ տանել կազմակերպելու համար հրամանատարի և նրա ընտանիքի կուլտուրական հանգիստը տարեդարձի որերին (տոմսեր թատրոնների ու ակումբների համար, գեղարվեստական յերեկույթների կազմակերպում ԿԲՏ և այլն):

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Կարևորագույն ագիտացիոն-մասսայական միջոցառումը, վորն իր եյությամբ պետք է դրված լինի տարեդարձի առթիվ կարմիր բանակայինների հետ տարվող ամբողջ աշխատանքի հիմքում, հանդիսանում է՝

Հոկտեմբերյան հեղափոխության մասնակիցների մասսայական արշավի կազմակերպումը դեպի զորանոցները:

Այդ արշավի վրա պետք է նայել վոչ թե, վորպես եպիզոդիկ միջոցառում (մեկ-յերկու յերեկո), այլ վորպես տոնակատարության պատրաստության համար կարմիր բանակայինների հետ տարվող ագիտացիոն աշխատանքի մի ամբողջ սիստեմ:

Արշավի խնդիրն է՝ փոխանցել մարտիկներին բոլշևիկյան տրադիցիաներ և նրանց մոբիլիզացիայի յենթարկել սոցիալիստական շինարարության ինչպես նաև Կարմիր բանակի մարտունակության ամրացման հերթական խնդիրների շուրջը:

«Արշավի» անցկացմանը, համաձայնության գալով տեղական կազմակերպությունների հետ, հարկավոր է ներգրավել՝

1. Հին բոլշևիկներին՝ Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակիցներին.

2. Նախկին քաղտաժանակիրների ընկերության անդամներին.

3. Գործարանների ու ֆաբրիկաների բանվորներին՝ Հոկտեմբերյան մարտերի ու քաղաքացիական պատերազմի կարմրադրոշավոր մասնակիցներին.

4. Աշխատանքի այն հերոսներին, վորոնք պարգևատրված են Լենինի և Աշխատանքի Կարմիր դրոշի շքանշաններով:

«Արշավի» բոլոր մասնակիցների հետ պետք է անցկացնել նախ

նական խորհրդակցություն, քննարկելով, արշավի պլանները և նրանց միջև բաշխելով զանազան ագիտացիոն աշխատանքներ:

«Արշավի» ձևերը կարող են լինել չափազանց բազմազան և կախված են զորամասերի ու տեղական կուսկազմակերպությունների նախաձեռնությունից: Բերենք այդ ձևերից մի քանիսը.

1. Հուշերի յերեկոներ ակումբներում ու լենինյան անկյուններում.

2. Զրույցներ կարմիր բանակայինների հետ մոտավորապես հետևյալ թեմաների շուրջը.

ա) բանվորների ու գյուղացիների դրությունը Ռուսաստանում նախքան Հոկտեմբերյան հեղափոխությունը.

բ) բանվոր դասակարգի և աշխատավորների դրությունը մեզանում և կապիտալիստական յերկրներում Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին.

գ) ինչ է վորոշել Կենտկոմի պլենումը խորհրդային առևտրի, լայն սպառման ապրանքների ու սև մետաղաձուլության մասին.

դ) մեր դժվարությունների պատճառներն ու բնույթը և նրանց հաղթահարման ուղիները.

յե) կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման ուղիները.

զ) ինչ է նշանակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն

է) ինչ է պարտավորեցնում կարմիր բանակայիններին միջազգային պարագան:

3. Հին բոլշևիկների, աշխատանքի հերոսների, Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակիցների ուժերով կարմիր բանակայինների հետ հատուկ քաղպարապմունքներ անցկացնել:

4. Ակումբներում ու լենինյան անկյուններում հարց ու պատասխանի յերեկույթների կազմակերպում Հոկտեմբերյան հեղափոխության պատմության ու սոցիալիստական շինարարության հարցերի վերաբերյալ՝ հին բոլշևիկների, քաղաքացիական պատերազմի մասնակիցների և աշխատանքի հերոսների ուժերով:

5. Մասսայական հավաքների կազմակերպում, նվիրված սոցիալիստական շինարարության ու Կարմիր բանակի հերթական խնդիրներին և Հոկտեմբերի հաղթանակի համար կուսակցության մղած պայքարի պատմության պրոպագանդին:

Քաղպարապմունքների կարգով, բոլոր կարմիր բանակայինների հետ պետք է մշակվի՝ «Հոկտեմբերի 15-րդ տարեդարձը և սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները» թեման:

Հոկտեմբերյան քաղպարապմունքը չպետք է անցնի, վորպես սովորական, սոսկական քաղպարապմունք: Նրա անցկացումը պետք է հանձնարարել զորամասերի պատասխանատու քաղաշխատողներին ու քաղմարմիններին: Բացի դրանից, այդ քաղպարապմունքն անցկացնելու համար պետք է ներգրավել պատասխանատու



քաղաքացիական կուսաշխատողներին, պրոպագանդիստներին և լավագույն հարվածային բանվորներին, աշխատանքի հերոսներին, վորոնք պարգևատրված են Լենինի շքանշանով և վորոնց ջոկում են դրա համար կուսակցական կոմիտեները:

Քաղմարմինները պետք է նշեն և հաստատեն անհատապես այն անձանց ցուցակը, վորոնք անց են կացնում հոկտեմբերյան քաղպարապմունքը և մանրամասնորեն հրահանգեն նրանց, տալով նրանց բոլոր անհրաժեշտ նյութերը, հրահանգումը պետք է անձամբ անցկացնեն քաղմարմինների պետերը:

Հոկտեմբերյան քաղպարապմունքների հատուկ կարևոր խնդիրն է՝ ծանոթացնել կարմիր բանակայիններին սոցիալիստական շինարարության կոնկրետ պրակտիկայի հետ, բանվոր դասակարգի ու կուսակցության այն պայքարի կոնկրետ նյութերի հետ, վոր մղվում է հնգամյակի 4-րդ ավարտական տարվա պլանի կատարման համար, մի անգամ ևս մոբիլիզացիայի յենթարկել կարմիր բանակայինների ուշադրությունը հերթական այն մարտական հարցերի շուրջը, վոր առաջադրել է Կենտկոմի վերջին պլենումը, ինչպես նաև միջազգային դրության հարցերի շուրջը:

## ԾԱՎԱԼԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՈՐԵԿ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԵՏ

Կարմիր բանակայինների հետ ագիտացիոն աշխատանքի ծավալման ժամանակ հարկավոր է ապահովել 1910 թվի նորեկ համալրման լրիվ ընդգրկումն այդ աշխատանքով:

Վորովհետև նորեկ կարմիր բանակայինների մեծամասնությունը նախապատրաստական աշխատանքի որերն անց է կացնելու մեկուսարանում, ուստի հարկավոր է այն բոլոր ագիտացիոն միջոցառումները, վոր նկատի յեն ունեցվում կարմիր բանակայինների համար, պետք է լրիվին անցկացնել նաև մեկուսարանում (հին բոլշևիկների և այլոց արշավը դեպի զորանոց, զրույցներ, քաղպարապմունքներ և այլն):

Բացի դրանից, հարկավոր է տարեդարձի նախորեյին, յերբ արդեն հավաքվում է համալրման մեծամասնությունը կազմակերպել գնդային ակումբներում (կամ մեկուսարանում) հատուկ յերեկույթներ՝ զորամասի մարտական տրադիցիաները նորեկ մարտիկներին փոխանցելու համար: Այդ յերեկույթի մոտավոր պլանն է.

1. Զորամասի հրամատարի զեկուցումը զորամասի մարտական պատմության ու մարտական տրադիցիաների մասին.

2. Հին հրամատարների հիշողություններ.

4. Քաղաքացիական պատերազմի մասնակից—վետերանների ու զորամասի լավագույն հարվածայինների մեծարում:

4. Գեղարվեստական մաս (կինո, պատի թերթ, ինքնագործունեություն):

Հարկավոր է նույնպես այդ յերեկույթի համար սարքել հա-

տուկ ցուցահանդես զորամասի պատմության վերաբերյալ, բստ հնարավորին ավելի լրիվ արտացոլելով այդ ցուցահանդեսում զորամասի մարտական պատմությունը և կարմիր բանակայինների ու պետկազմի պայքարը մարտական պատրաստության բարձր հաջողությունների համար:

## XV. ՏԱՐԵԴԱՐՁՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Միայն այն կուսկազմակերպությունը (ԿԲՏ, ակումբ, լենանկյուն) կկարողանա լրիվին կատարած համարել հոկտեմբերի տարեդարձի անցկացումը, որն իր աշխատանքով կկարողանա ռեալ արդյունքներ ստանալ զորամասերի մարտական պատրաստության բարելավումից, տեխնիկայի տիրապետումից, կարգապահության ամրացումից ու անվթարությունից, այսինքն՝ երբ նա կկարողանա իր աշխատանքով ապահովել զորամասի տարեդարձի տոնակատարության գալը մարտունակության առավելագույն դրական ցուցանիշներով:

*Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի շուրջը տարվելիք ամբողջ ագիտացիոն-մասսայական աշխատանքը վերջնական հաշվով պետք է ուղղված լինի հատկապես այդ խնդրի լուծմանը:*

*Այդ նպատակով անհրաժեշտ է ամենից առաջ կազմակերպել կարմիր բանակայինների ինքնապարտավորությունների հոսանք՝ վերացնելու համար հետամնացությունը մարտական ու քաղաքական պատրաստության այս կամ այն բնագավառում և ամենից առաջ՝* տեխնիկայի տիրապետման ու լիակատար անվթարության *համար մղած պայքարի բնագավառում: Ինքնապարտավորումների մեջ հատուկ ուշադրություն պետք է նվիրել մանյովրներից հետո նյութական մասի արագ ու գերազանց վերանորոգմանը, արհեստանոցների լավագույն աշխատանքին և այլն:*

*Բոլոր լենանկյուններում հարկավոր է սարքել կարմիր բանակայինների ինքնապարտավորությունների վահաններ՝* «Ես պարտավորվում եմ» *մակագրությամբ, փակցնելով այդ վահանների վրա ինքնապարտավորությունները և այդ ինքնապարտավորությունների կատարման ընթացքի լուսաբանումը:*

*Տոնակատարության պատրաստության օրերը պետք է հավերժացնել նույնպես կոլեկտիվ ինքնապարտավորությունների փոխանակումով ամբողջ զորամասի և շեֆ ձեռնարկությունների ու յենթաշեֆ կոլտնտեսության միջև ու զորամասի ստորաբաժանումների միջև:*

*Տարեդարձի նախօրեին (նոյեմբերի 3-4) հարկավոր է լենանկյուններում ու ակումբներում կազմակերպել* ինքնապարտավորությունների ստուգման հատուկ երեկոներ՝ *շեֆ ձեռնարկության*



*բանվորների ու յենթաշեֆ կոլտնտեսության կոլտնտեսականների լայն մասնակցությամբ:*

*Այդ երեկույթների համար օգտակար է պատրաստել հատուկ ցուցահանդեսներ, որոնք ցույց տան զորամասի, շեֆ ձեռնարկության ու յենթաշեֆ կոլտնտեսության նվաճումները հոկտեմբերի 15-րդ տարեդարձին, ցուցադրելով մարտական պատրաստության, արդֆինպլանի ու կոլտնտեսությունների տնտեսական կազմակերպչական ամրացման համար մղած պայքարում լավագույն հարվածայինների դիմանկարները:*

*Հանձն առած ինքնապարտավորությունների կատարման մասին փոխադարձ հաշվետվություններից բացի, այդ երեկույթներում պետք է կազմակերպվեն լավագույն կարմիր բանակային, կոլտնտեսական ու բանվոր հարվածայինների մեծարումն ու մրցանակաբաշխություն:*

*Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի ամբողջ նախապատրաստությունը պետք է վերածվի մարտական պատրաստության ու տեխնիկայի տիրապետման առանձին կարևորագույն բնագավառների ընդհանուր, հեղափոխական ստուգատեսի:*

*Այդ պատճառով տարեդարձի պատրաստությունը պետք է հագեցված լինի այնպիսի միջոցառումներով, ինչպիսիք են.—*

1. Մասսայական հրաձգային մրցակցություններ (*ԿԲՏ պետկազմի մրցություններ ատրճանակով և հրաձգային զենքի այլ տեսակներով*).
2. Ռազմա-տեխնիկական մարտեր ստորաբաժանումների միջև՝ *տեխնիկայի լավագույն յուրացման վերաբերյալ.*
3. Քաղաքական «մարտեր» *Կենտկոմի վերջին պլենումի որոշումների ու միջազգային դրության հարցերի լավագույն յուրացման վերաբերյալ.*
4. *Տեղական ֆիզկուլտուրային մրցակցություններ ու մասսայական քննություններ՝ «Պատրաստ Աշխատանքի ու Պաշտպանության» նշանի համար:*

*Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի առթիվ մարտական պատրաստության շուրջը հատուկ կարևոր խնդիր պետք է լինի.*

Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի անվան ռացիոնալացման ու գյուտարարական առաջարկների հավաքը.

*Այս աշխատանքը պետք է ուղղված լինի տեխնիկայի լավագույն տիրապետման ու խնամքի խնդիրների լուծմանը և լիակատար անվթարության համար մղած պայքարին: «Բոյեվայա Պոդգոտովկա» թերթն արդեն ծավալել է արշավ ռացիոնալացման ու գյուտարարության համար: Յուրաքանչյուր կուսկազմակերպության խնդիրն է՝ մարտականորեն ներգծվել այդ արշավին:*

*Ռացիոնալացման ու գյուտարարական առաջարկների հավաքի կամպանիան անցկացնելու համար հարկավոր է.*

1. Զորամասերում անցկացնել հարվածայինների ռացիոնալիզատորների և գյուտարարների լայն հավաք, դնելով հրամանատարության զեկուցումը տեխնիկայի տիրապետման ու անվթարության համար պայքարի խնդիրների մասին:

2. Կազմակերպել ցուցահանդես թե արդեն յեղած և թե սպասվող ռացիոնալացման ու գյուտարարական առաջարկների համար:

3. Տարեդարձի նախօրեյին անցկացնել ռացիոնալիզատորների ու գյուտարարների հաշվետու յերեկույթներ՝ մրցանակաբաշխելով նրանցից լավագույններին:

Պետկազմի միջև ռացիոնալացման ու գյուտարարական առաջարկների հավաքի վերաբերյալ վոչ պակաս աշխատանք պետք է կատարեն Կարմիր Բանակի Տները: Նրանցից յուրաքանչյուրում Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին պետք է սարքվի կարմիր բանակայինների ու պետկազմի գյուտարարական ու ռացիոնալացման լավագույն առաջարկները, վոր յեղել են զորամասերում և ցուցադրեն այդ առաջարկների հեղինակների նկարները:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

Տարեդարձի շուրջը ագիտացիոն - մասսայական աշխատանքով պետք է լայնորեն ընդգրկվեն նաև պետկազմի ընտանիքները: Դրա համար անհրաժեշտ է.

1. Անցկացնել ԿԲՏ ընդհանուր կայազորային ժողով կինակտիվից, դնելով զեկուցում Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի տոնակատարության խնդիրների ու Կենտկոմի վերջին պլենումի վորոշումների մասին:

2. Կազմակերպել հանրակացարանների լենանկյուններում զրույցներ պետկազմի կանանց հետ միջազգային դրության և սոցշինարարության նվաճումների ու խնդիրների մասին՝ Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին:

3. Կազմակերպել բոլոր հանրակացարաններում պետկազմի կանանցից ինքնագործոն խմբակներ՝ ակտիվ մասնակցելու համար տարեդարձի տոնակատարության պատրաստությանը (հանրակացարանների լենանկյունների սարքավորում, ոգնություն զորամասերում լենանկյունների ու ակումբների կահավորմանն ու զարդարանքին և այլն):

4. Անցկացնել ԿԲՏ բանվորուհիների հանդիպում պետկազմի կանանց հետ, նվիրելով այդ հանդիպումը սոցիալիստական շինարարության նվաճումների պրոպագանդին ու այդ շինարարությանը աշխատավոր կնոջ ցույց տված մասնակցությանը:

5. Հավերժացնել Հոկտեմբերի տարեդարձը, բանալով նոր կուլտուր-կենցաղային հիմնարկներ (մանկամսուրներ, մանկական հրապարակներ, ճաշարաններ, լենանկյուններ, հանրակացարաններ և այլն):



## «ԿԱՐՄԻՐ ԶՈՐԱՆՈՑԻ» ՍՏՈՒԳԱՏԵՍ

Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի ամբողջ նախապատրաստական աշխատանքը պետք է սերտորեն զուգակցվի կարմիր բանակայինի ու հրամանատարի կենցաղի բարելավման մասին բարձր հոգատարության հետ, վորի նպատակը պետք է լինի ստեղծել առավելագույն զվարճություն կարմիր զորանոցում ու հրամանատարի հանրակացարանում և առավելագույն չափով բարելավելով կարմիր բանակայինների ու պետկազմի կուլտուր-կենցաղային սպասարկումը:

Այդ խնդիրների լուծմանը պետք է յենթարկվի «Կարմիր զորանոցի ստուգատեսի» վերաբերյալ ԲԳԿԲ Քաղվարչության առաջարկած դիրեկտիվը:

«Զորատեսի» անցկացման համար յուրաքանչյուր զորամասում պետք է ստեղծել հատուկ հանձնաժողով զորամասի կոմիսարի (քաղմասի ոգնականի) նախագահությամբ, հրամանատարի տնտեսմասի ոգնականի, ավագ բժշկի, շեֆկազմակերպությունների ու կարմիր բանակայինների ներկայացուցիչների անդամակցությամբ:

«Կարմիր զորանոցի ստուգատեսը» պետք է անցկացվի հատուկ մշակված պլանով, վորի մեջ պետք է մտցրված լինեն կարմիր բանակայինի ու հրամանատարի կենցաղի բարելավման վերաբերյալ միանգամայն կոնկրետ միջոցառումներ.—

1. Լենինյան անկյունների որինակելի կահավորումը: Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին պետք է լիովին կատարվի ընկ. Գամարնիկի դիրեկտիվը՝ լենինյան անկյունների կահավորման ու աշխատանքների բարելավման վերաբերյալ:

2. Ճաշարանների ու կարմիր բանակային թեյարանների լրացուցիչ կահավորումը կարասիքով ու ինվենտարով:

3. Կարմիր բանակայինների նոր թեյարանների, պետկազմի համար նոր բուֆետների ու կաֆեների բացում:

4. Սպորտի դահլիճների, հրապարակների, հրաձգարանների և այլի կահավորում ու բացում:

5. Ակմբային շենքերի կահավորում:

6. Մանկական հրապարակների ու մանկամսուրների բացում:

7. Պետկազմի համար գիշերային սանատորիաների բացում և այլն:

Քաղմարմինները պետք է տեղերում ապահովեն խորհրդային հասարակայնության լայն մոբիլիզացիան «Կարմիր զորանոցի ստուգատեսի» շուրջը և տեղական խորհուրդների ու գործկոմների, կոոպերացիայի, տեղական առբաժինների ու հասարակական կազմակերպությունների (ՊԱԶԸ-Ավիաքիմ, Կարմիր Խաչ և այլն) ձեռնարկեն մի շարք այնպիսի միջոցառումներ, վորոնց նպատակն է կարմիր բանակայինի ու հրամանատարի կենցաղի բարելավումը:

## ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

1․ Զորանոցային ինվենտարի վերանորոգման արտադրական բրիգադների կազմակերպում։

2․ Բանվոր չեֆերի մասսայական արշավներ դեպի զորանոց՝ մասնակցելու համար զորանոցների լրացուցիչ կահավորմանն ու զորանոցային ինվենտարի վերանորոգմանը։

3․ Կոլտնտեսական բրիգադների արշավներ դեպի զորանոց։

4․ Պետկայմի կանանց մասսայական արշավներ դեպի զորանոց զարդարելու համար զորամասի կուլտուրական հիմնարկները (լենինյան անկյուններ, ակումբներ, գրադարաններ։

5․ Հասարակական սննդի ստուգատես և այլն։

«Կարմիր զորանոցի ստուգատեսի» ամբողջ կամպանիան պետք է անցնի կարմիր բանակային մասսայի բարձր ինքնագործունեությամբ։ Այդ նպատակով հարկավոր է զորամասերում կազմակերպել՝ կենցաղի ու կուլտուրական աշխատանքի բարելավման վերաբերյալ կարմիր բանակային առաջարկների հավաք և կազմակերպել զանազան ինքնագործուն բրիգադներ անցկացնելու համար կուլտուր-կենցաղային այս կամ այն միջոցառումը։

«Կարմիր զորանոցի ստուգատեսը» պետք է մտնի նաև պետկայմի հանրակացարանը և այնտեղ ստեղծի տարեդարձի առթիվ իրոք տոնական պարագա ու դրավչություն։

## ԿԲՏ, ԱԿՈՒՄԲՆԵՐՆ ՈՒ ԼԵՆԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ԿԲՏ, ակումբների ու լենանկյունների վրա յն ընկնում Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի տոնակատարման պատրաստության և անցկացման աշխատանքի հսկայական մասը։

Վերոհիշյալ բոլոր ագիտացիոն-մասսայական միջոցառումների իրագործմանն անմիջական մասնակցություն ցույց տալուց բացի, ԿԲՏ, ակումբներն ու լենանկյուններն պետք է կատարեն նաև առնվազն հետևյալ աշխատանքները։

1․ Կազմակերպել ցուցահանդես Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի առթիվ։

Ցուցահանդեսը պետք է կառուցել մոտավորապես հետևյալ պլանով․

ա) Ռուսաստանը Հոկտեմբերից առաջ (իմպերիալիստական պատերազմի արդյունքները, բանվոր դասակարգի ու գյուղացիության դրությունը, հեղափոխական վերելքի աճումը)։

բ) Զինված ապստամբության նախապատրաստությունը և Հոկտեմբերի հաղթանակը։

(Փաստաթղթեր ու լուսանկարներ, վորոնք ցույց են տալիս Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստությունն ու ըն-



թացքը և հաղթանակած պրոլետարիատի առաջին ձեռնարկումները)։

գ) Խորհրդային հանրապետությունը կրակի ողակում (քաղաքացիական պատերազմն ու նրա հետևանքները)։

դ) Քայքայումից դեպի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցում (սոցիալիստական շինարարության աճման ցուցանիշները 15 տարվա ընթացքում)։

ե) Լենինյան ազգային քաղաքականությունը գործողության մեջ։ (Սոցիալիստական շինարարության ու սոցիալիստական կուլտուրայի աճման ցուցանիշներն ազգային հանրապետություններում ու մարզերում)։

զ) Լենինիզմի միջազգային հաղթանակը։ (Համեմատական տվյալներ կապիտալիստական տնտեսության ու ԽՍՀՄ տնտեսության դրության մասին Հոկտեմբերի 15-րդ տարեդարձին)։

է) Հնգամյակը 4 տարում ավարտելու համար, 2-րդ հնգամյակում անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ (Ինչ համար է ԽՍՀՄ մարտնչում հնգամյակը 4 տարում ավարտելու։ Կենտկոմի վերջին պլենումի վորոշումները, 2-րդ հնգամյակի խնդիրները)։

ը) Ամրացրու սոցիալիզմի յերկրի պաշտպանությունը։ (Պատերազմի սպառնալիքը և կարմիր բանակի խնդիրները)։

Լենանկյուններում ցուցահանդեսի փոխարեն հարկավոր է սարքել ագիտվահան՝ «ԽՍՀՄ 15-րդ տարեդարձին»։

2․ Խնամքով ընտրել մասսայական գեղարվեստական աշխատանքի համար ռեպերտուար։

Այդ ռեպերտուարի հանձնարարական ցուցակները (կինոնկարներ, նյութեր, կարմիր բանակային եստրադի համար և այլն) ապրեցված են «Կրասնոարմեյսկիյ Կլուբ» ամսագրի № 9-ում։ Ակումբի, ԿԲՏ ու լենինյան մասսայական գեղարվեստական աշխատանքի բովանդակությունը հոկտեմբերի ընթացքում և նոյեմբերի սկզբներին պետք է լինի համապատասխանի տոնակատարության նախապատրաստման ու անցկացման խնդիրներին։

Լենինյան անկյուններում տարվող աշխատանքի համար ըստ հնարավորին պետք է ընտրել այնպիսի դիապոզիտիվներ, վորոնք ցույց են տալիս պայքարը Հոկտեմբերի հաղթանակի համար և սոցիալիստական շինարարության նվաճումները և կազմակերպել կարմիր բանակայինների համար այդ դիապոզիտիվների ցուցադրումներ հենց անմիջորեն լենինյան անկյուններում։

3․ Լայնորեն և կազմակերպված ձևով օգտագործել ռադիոն։ Ակումբի ու ԿԲՏ ռադիոհանգույցը պետք է օգտագործվեն յերկու ուղղությամբ․—

նախ՝ պետք է նախնական ... ությամբ (ըստ ռադիոհաղորդման ծրագրի, և լենանկյուններում և պետկայմի բնակարաններ-



ՀԱՄԱՐ

րում հաղորդել կենտրոնական ռադիոկայանների ամենից հետաքրքիր ծրագրերը.

Ցերեկը՝ ռադիոլսարանի միջոցով հաղորդել լենինկյուններում և պետկազմի բնակարաններում այն հաղորդագրությունները, վոր կազմակերպել են ակումբն ու ԿԲՏ: Այդ հաղորդագրությունների մոտավոր ձևերն են.

ա) Հեղափոխական-պատմական որացույց, վոր կառուցված ե Հոկտեմբերի հաղթանակի համար կուսակցության մղած պայքարի պատմական կարևորագույն անցքերի ամփոփ մեկնաբանման հիման վրա: Սույն նամակի հավելվածում բերված ե այդ որացույցի հիմնական բովանդակությունը հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 7-ը: Որացույցի հաղորդման հետ միասին տեղի պետք ե ունենա պատմական այս կամ այն անցքի պարզաբանումը և պատմական փաստաթղթերի ընթերցումը: Այդ փաստաթղթերը կարելի յե գտնել Լենինի յերկերի ժողովածվի XIV հատորի 2-րդ մասում 1-ին հրատարակություն) և XXI հատորում (յերրորդ հրատարակություն):

Նույնպիսի որացույց հարկավոր ե կազմակերպել նաև լենինկյուններում, փակցնելով հատուկ վահանի վրա հեղափոխական անցքերի ամփոփ նկարագրությունը և գրույցներ կազմակերպելով որացույցի շուրջը:

Oգտակար ե նույնպես հեղափոխական որացույցը մտցնել ամենօրյա քաղինֆորմացիայի բովանդակության մեջ:

բ) Հոկտեմբերի մասին գեղարվեստական գրականության հատվածների ընթերցումը. (օրինակ՝ Ջոն Ռիդի «10 օր, վոր ցնցեցին աշխարհը» գրքից:

գ) Հոկտեմբերի տարեդարձին պատրաստվելու խրոնիկա (զորամասերի ու ստորաբաժանումների նյութերով):

դ) Ռադիոկանչեր ստորաբաժանումների միջև Հոկտեմբերի 15 տարեդարձի առթիվ ինքնապարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

Կինոցուցադրումներից առաջ և մասսայական յերեկույթների ընդմիջումներին ԿԲՏ ու ակումբները պետք ե ցուցադրեն ինքնագործ դիապոզիտիվներ (լուսաթերթեր) Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի լոզունգներով, սոցիալիստական շինարարության նվաճումների ցուցանիշներով և Կենտկոմի վերջին պլենումի վորոշումներից վերցրած քաղվածքներով:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի առթիվ վիթխարի խնդիրներ են ընկնում զորամասերի ու ԿԲՏ գրադարանային աշխատանքի վրա: Գրադարանները պետք ե լիովին ապահովեն գրականությամբ պրոպագանդիստներին ու ագիտատորներին ու ծավալեն



լայն ակտիվ աշխատանք առաջ շարժելու համար կարմիր բանակայինների ու պետկազմի մեջ այն գրականությունը, վոր լուսաբանում ե կուսակցության պայքարի պատմությունը Հոկտեմբերի հաղթանակի համար, սոցիալիստական շինարարության հաղթանակներն ու հերթական խնդիրները:

Դրա համար գրադարանը պետք ե ձեռնարկի հետևյալ հիմնական միջոցառումները.

1. Կազմել ու լենինկյուններին տալ տարեդարձի համար հատուկ ընտրած շարժական գրադարաններ և օգնել լենինկյուններում կազմակերպելու գրականության ցուցահանդեսներ:

2. Ջոկել հատուկ գրադարաններ ստորին ագիտատորի համար:

3. Օգտագործել գրքի պրոպագանդի համար լուսային ագիտացիայի ձևերը, մտցնելով լավագույն գրքերի հանձնարարականը լուսաթերթերի մեջ և եկրանի վրա ցուցադրելով ինքնագործ դիապոզիտիվներ այս կամ այն հանձնարարականով:

4. Կահավորել գրականության լավագույն ցուցահանդես գնդային ակումբում ու ԿԲ Տանը:

Բացի դրանից, գրադարանը տարեդարձի նախապատրաստության շրջանում պետք ե կազմակերպի.

1. Հատուկ գրախոսական յերեկո, տալով Հոկտեմբերի մասին գրականության վորակյալ տեսություն (օբզոր):

2. Գրական-գեղարվեստական յերեկո, խնդիր ունենալով՝ Հոկտեմբերի հաղթանակի համար մղած պայքարի ու սոցիալիստական շինարարության մասին լավագույն գեղարվեստական գրականության պրոպագանդը: Բացի գրականության տեսությունից, բարձրորակ դասախոսների ուժերով այդ յերեկույթում հարկավոր ե կազմակերպել Հոկտեմբերի մասին գեղարվեստական լավագույն գրականության հատվածների գեղարվեստական ընթերցում ու բեմադրություններ:

Հոկտեմբերի 15-րդ տարեդարձի առթիվ գրականության հանձնարարական ցուցակը զետեղված ե «Կրասնոարմեյսկիյ Կլուբ» ամսագրի № 9-ում:

## ՏԱՐԵԴԱՐՁԻ ՈՐԵՐԻՆ—ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏ

Ինչպես յերևում ե վերոհիշյալից տարեդարձի շուրջը հիմնական ագիտացիոն-պրոպագանդիստական միջոցառումները պետք ե ձեռնարկվեն տոնակատարությանը պատրաստվելու կարգով, վորպեսզի բուն տոնի որերին (նոյեմբերի 6-ին, 7-ին և 8-ին) առավելագույն չափով կուլտուրական զվարճություններ տրվեն կարմիր բանակայիններին, հրամանատարներին ու նրանց ընտանիքներին:

Բացի ցույցերին մասնակցելուց, այդ որերին կարելի յե անցկացնել.—

## Կ. Բ. ՏՆԵՐՈՒՄ

1. Մանկական ցերեկույթներ:
2. Պետկայմի հանդիսավոր յերեկույթներ արտադրության
հարվածայինների հետ միասին:
3. Քաղաքից դուրս մասսայական զբոսանքներ:
4. Համերգներ (փորձվյալ ուժերով):
5. Պետկայմի հրաձգային ու ֆիզկուլտուրական մրցակցու-
թյուններ:

## ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

1. Եքսկուրսիաներ դեպի թանգարանները, գործարաններն ու
կոլտնտեսությունները:
2. Հանդիսավոր ճաշկերույթներ բանվորների ու կոլտնտեսա-
կանների մասնակցությամբ:
3. Կինոների, բանվորական ակումբների ու թատրոնների կո-
լեկտիվ այցելումներ:
մրցակցություններ:
4. Հրաձգային ու ֆիզկուլտուրային յերեկույթներ բանվորական ու
5. Ինքնագործունեյության խմբակների մասնակցությամբ:
կոլտնտեսական ինքնագործոն հանձնարա-
Ագիտմասսայական աշխատանքի սույն նամակով
րած ձևերն ու մեթոդները վոչ միայն չպետք է նեղեն կուսկազ-
մակերպությունների ու քաղմարմինների նախաձեռնությունը,
այլ, ընդհակառակը, պետք է առաջացնեն նախաձեռնության և
ինքնագործունեյության այնպիսի հանդիպական ալիք, վորն ա-
պահովի ԲԳԿԲ Քաղվարչության տոնակատարության մասին
տված դիրեկտիվի լավագույն կատարումը:
Տոնակատարության պատրաստության մեջ մեծ ուշադրու-
թյուն պետք է նվիրել՝ այդ աշխատանքին կարմիր բանակային-
ների ու պետկայմի նախաձեռնության ու ինքնագործունեյության
ներգրավմանը:

1. Կազմակերպել կարմիր բանակային առաջարկների հավաք
(կարելի յե լավագույն առաջարկի մրցության ձևով), թե ինչ-
պես լավագույն ձևով անցկացնել Հոկտեմբերի 15-րդ տարեդար-
ձը: Լենինկյուններում, գնդային ակումբներում ու ԿԲՏ ունենալ
կարմիր բանակային առաջարկների տետրեր, իսկ ստացած առա-
ջարկների մասսայականացման համար սարքել «Ցես առաջարկում
եմ» խորագրով հատուկ վահաններ:
2. Կազմակերպել կարմիր բանակայինների ու պետկայմի
ինքնագործոն խմբակներ՝ անցկացնելու համար պլանով նշված
այս կամ այն միջոցառումը.
ա) շեֆերի հետ հանդիպման յերեկույթների կազմակերպ-
ման վերաբերյալ.



բ) լենինկյան կահավորման վերաբերյալ.
գ) եքսկուրսիաների կազմակերպման վերաբերյալ.
դ) հոբելյանական ցուցահանդեսների կազմակերպման վերա-
բերյալ և այլն:
3. Շրջանային թերթում նկարագրել կարմիր բանակային
առաջարկներն ու տարեդարձի տոնակատարության պատրաստման
ընթացքը, ջոկելով այդ նպատակի համար հատուկ գլխթղթակցա-
յին սյուն:

## ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱԳԻՏՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հավելվածներ.—
1. Նյութեր՝ «Պայքարի ու հաղթանակների 15 տարին» ցու-
ցահանդեսի համար:
2. Հեղափոխական անցքերի տարեգիրը 1917 թվի հոկտեմ-
բերի 1-ից մինչև նոյեմբերի 7-ը:

Հավելված 1

# ՆՅՈՒԹԵՐ

«Պայքարի ու հաղթանակների 15 տարի» ցուցահանդեսի համար

## 1. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ԱՌԱՋ

*Համաշխարհային իմպերիալիստական պատերազմը ծայրահեղորեն քայքայեց և ավերեց յերկրի արտադրական ուժերը.*

### 1. Ցարական բանակի թիվը

*ա) Մինչև պատերազմը* . . . . . . . . . . 1 423 *հազար մարդ*
*բ) պատերազմի ժամանակ զորահավաքի յեն յենթարկվել* 15 123 *հազար մարդ*

### 2. Պատերազմի ծախսերը յուրաքանչյուր օրվա համար

| | | |
|---|---|---|
| 1914 *թ.* | 8,5 | *միլիոն ոսկի ռուբլի* |
| 1915 *թ.* | 16 | » » » |
| 1916 *թ.* | 24 | » » » |
| 1917 *թ.* | 37 | » » » |

*Յերեք տարվա ընթացքում* (1914 *թ. հուլիսից մինչև* 1917 *թ. հոկտեմբերը) Ռուսաստանը պատերազմի համար ծախսել է* 50 *միլիարդ* 500 *միլիոն ռուբլի (թղթադրամ)։*

### 3. Պարտքեր օտարյերկրյա պետություններին

*(Ռուսաստանի բնակչության յուրաքանչյուր շնչին)*

*ա) մինչև պատերազմը* . . . . . . . . . . 53 *ռուբլի*
*բ) պատերազմից հետո* . . . . . . . . . . 231 *ռուբլի*

### 4. Իմպերիալիստական պատերազմի զոհերը

*Պատերազմի տարիներում Ռուսաստանի ցարական բանակը կորցրեց* 2,5 *միլիոն մարդ՝ սպանված։*

### 5. Ումն էր պատկանում հողը

10 միլիոն գյուղացիական տնտեսություններ տիրում էին 79,5 միլիոն հեկտար հողի, 28 հազար կալվածատերեր տիրում էին 67,7 միլիոն հեկտար հողի:

### 6. Ցանքսադաշտերի նվազումը

| | |
|---|---|
| 1913 թ. . . . . . . . . . . . . . . . . | 100 տոկոս |
| 1916 թ. . . . . . . . . . . . . . . . . | 91,6 » |

### 7. Արդյունաբերական արտադրանքի անկումը

| | 1913 թ. | 1917 թ. |
|---|---|---|
| ա) ածխի արտադրանքը (միլիոն վոսկի ռուբլ.) . | 177,2 | 164,9 |
| բ) պողպատի և չուգունի ձուլումը (միլ. փթերով) . | 219 | 155 |
| գ) սննդարդյունաբերությունը (միլ. վոսկի ռուբլով) | 1,538 | 497 |
| դ) տեքստիլ արդյունաբերութ. (միլիոն վոսկի ռուբլով) | 1,506 | 996 |

### 8. Բանվոր դասակարգի դրությունը

(բանվորի ամսական աշխատավարձը ապրանքային ռուբլով).

| | |
|---|---|
| 1913 թ. (հունվար) . . . . . . . . . . | 22 ռուբ. 10 կ. |
| 1916 թ. (դեկտեմբեր) . . . . . . . . . | 18 ռուբ. 70 կ. |

### 9. Գործադուլային շարժումը հոկտեմբերից առաջ

| | Գործադուլների թիվը | մասնակցում էին |
|---|---|---|
| 1914 թ. | 3.534 | 1.337 հազ. մարդ |
| 1915 թ. | 948 | 539 » » |
| 1916 թ. | 1,284 | 951 » » |
| 1917 թ. (հունվար-փետրվար) | 1,930 | 676 » » |

Ծանոթություն. Այս բաժնում, բացի վերոհիշյալ տվյալներից, պետք է ցուցադրել նաև իմպերիալիստական պատերազմի շրջանից պատմական լուսանկարներ (ժուռնալներից և հավաքածուներից).

## II. ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այս բաժնում անհրաժեշտ է ցույց տալ.

1. 1917 թ. կարևորագույն հեղափոխական անցքերի օրագիրը.
2. Քաղվածքներ Լենինի ապրիլյան թեզիսներից.



3. Քաղվածքներ ՌՍԴԲԿ մանիֆեստից (1917 թ. օգոստոս).
4. Բոլշևիկների ֆրակցիայի դեկլարացիան նախապառլամենտում 1917 թ. հոկտ. 20-ին (7):
5. Բոլշևիկների Կենտկոմի 1917 թ. հոկտեմբեր 23-ի (10) բանաձևը զինված ապստամբության նախապատրաստության մասին:
6. Նախահոկտեմբերյան անցքերը (հուլիսյան օրեր, մասսայական գործադուլներ և այլն) և Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքը ցույց տվող լուսանկարներ (ժուռնալներից և հավաքածուներից).
7. Դեկրետ հաշտության մասին.
8. Դեկրետ հողի մասին.

Ծանոթություն.—Այստեղ թված բոլոր փաստաթղթերը կարելի յե գտնել Լենինի ժողովածույում (հատոր 14-րդ, մաս 2-րդ և հատոր 15-րդ).

## III. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԱԿԵ ՕՂԱԿՈՒՄ

### (Քաղաքացիական պատերազմ)

Այս բաժինը պետք է առանձին կահավորել, մտցնելով այնտեղ հետևյալ նյութերը.—

1. Կենտրոնում—ԽՍՀՄ քարտեզը՝ նշելով քաղաքացիական պատերազմի ճակատները 1919 թվին.

2) Լուսանկարներ քաղաքացիական պատերազմի պատմությունից.

3) Քաղվածքներ քաղաքացիական պատերազմի մասին՝ Լենինի ճառերից և հոդվածներից.

4. Ժողովրդական տնտեսության դրության վրա ունեցած քաղաքացիական պատերազմի ազդեցության հետևյալ ցուցանիշները.

ա) Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության ընդհանուր արտադրանքը (միլիոն ռուբլիներով) . . . . . . . .

| | 1917 թ. | 1920 թ. |
|---|---|---|
| | 4.314 | 1.100 |

| | 1913 թ. | 1920 թ. |
|---|---|---|
| Քարածխի արտադրանքը . . . . . . . . . | 100 տոկոս | 27 տոկոս |
| Նավթի արտադրանքը . . . . . . . . . | 100 » | 41 » |
| Չուգունի ձուլումը . . . . . . . . . . | 100 » | 2,4 » |
| Շոգեկառքերի շինարարությունը . . . . . | 100 » | 15 » |
| Բամբակեղեն գործվածքների արտադր. . . . | 100 » | 27 » |
| Շաքարի արտադրությունը . . . . . . . | 100 » | 5,8 » |

| | 1917 թ. | 1921 թ. |
|---|---|---|
| բ) խոշոր արդյունաբերության մեջ զբաղված բանվորների քանակը (միլիոններով) | 3.024 մարդ | 1.480 մարդ. |
| գ) Գյուղատնտեսությունը | | |
| հացահատիկ (միլիարդ փթերով) . . . . . . . . | 4,0 | 2,3 |
| Բամբակի ցանքսերը հազար (դեսյատիններով) | 1916 թ. | 1921 թ. |
| | 714 | 109 |
| Կանեփի ցանքսերը (հազար դեսյատիններով . | 1,142 | 396 |

# IV· ՔԱՅՔԱՅՈՒՄԻՑ ԴԵՊԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

*«Ապացուցած լինելով, որ հեղափոխական կազմակերպությամբ մենք էլ վիճակի յենք հակահարված տալ շահագործողների բռնությանը, մենք պետք է նույնն ապացուցենք նաև մի այլ ասպարեզում, որ կոմունիստական հասարակարգը կարող է ստեղծվել պատերազմում հաղթանակած պրոլետարիատի կողմից (Լենին):*

## 1. ԽՍՀՄ ժողովրդական յեկամուտը

| | | |
|---|---|---|
| *Ընդհանուր յեկամուտը* | 1926—27 *թ.* | 25 *միլիարդ ռուբլի* |
| | 1931 *թ.* | 50 *միլիարդ ռուբլի* |

*Յեկամտի բաշխումը* 1932 *թվին.*

| | |
|---|---|
| *Պրոլետարիատ* | 47 *տոկոս* |
| *Կոլխոզնիկներ* | 30 » |
| *Մենատնտես-գյուղացիներ* | 8 » |
| *Կուլակային և քաղաքային բուրժուազիան* | 0,1 » |

## 2. Պետական միասնական բյուջեն

| | |
|---|---|
| 1923—24 *թ.* | 1,76 *միլիարդ ռուբլի* |
| 1932 *թ.* | 27,4 *միլիարդ ռուբլի.* |

## 3. Ագրարային-ինդուստրիալ յերկրից՝ ինդուստրյալ-ագրարային յերկիր

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

| | | |
|---|---|---|
| 1913 *թ.* | *արդյունաբերություն* | 42 *տոկոս* |
| 1913 *թ.* | *գյուղատնտեսություն* | 58 » |
| 1931 *թ.* | *արդյունաբերություն* | 53 » |
| 1931 *թ.* | *գյուղատնտեսություն* | 47 » |

## 4. Կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ

| | |
|---|---|
| 1922—23 *թ.* | 116 *միլիոն ռուբլի* |
| 1926—27 *թ.* | 1·166 *միլիոն ռուբլի* |
| 1932 *թ.* | 1·000 *միլիոն ռուբլի* |



## 5. Արդյունաբերության աճումը

| | 1913 *թ.* | 1921 *թ.* | 1933 *թ* |
|---|---|---|---|
| *ա) քարածուխի արտադրանքը* | 30 *միլ. տոնն* | 8 *միլ. տոնն* | 90 *միլ. տոնն* |
| *բ) չուգունի ձուլումը* | 4,5 *միլ. տոնն* | 118 *հազ. տոնն* | 9 *միլ. տոնն.* |
| *գ) պողպատի ձուլումը* | 4,5 » » | 172 *հազ. տոնն* | 9,6 *միլ. տոնն* |
| *դ) ելեկտրո-ենեոգիայի արտադրանքը (միլիարդ կիլ. ժամերով)* | 1,9 | 0·37 | 17 |

| | 1913 | 1926–27 | 1931 |
|---|---|---|---|
| *ե) մեքենաշինարարություն (միլիոն ռ.)* | 300 | 800 | 4000 |

| | 1930 *թ.* | 1932 *թ.* |
|---|---|---|
| *զ) յերկաթուղային տրանսպորտի ապրանքաշրջանառությունը (միլիոն տոններով* | 240 | 300 |

## 6. Գյուղատնտեսությունը

### *ա)* ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՃՈՒՄԸ

| | |
|---|---|
| 1927 *թ.* | 1,1 *տոկոս* |
| 1932 *թ. (հունիս)* | 61,5 *տոկոս* |

### *բ)* ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԱՃՈՒՄԸ

| | |
|---|---|
| 1928 *թ.* | 2000 *հազար հեկտար* |
| 1932 *թ. (գարնանային կամպանիա)* | 66·875 *հազար հեկտար* |

### *գ)* ԶԵՐՆՈՏՐԵՍՏԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՔՍԱԴԱՇՏԵՐԸ

| | |
|---|---|
| 1929 *թ.* | 500 *հազար հեկտար* |
| 1932 *թ. (առ հունիս)* | 10·875 *հազար հեկ.* |

### *դ)* ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

| | 1913 *թ.* | 1928 *թ.* | 1932 *թ.* |
|---|---|---|---|
| *գյուղատնտեսական մեքենաների արտադրություն (միլոն ռուբլիներով)* | 80 | 160 | 910 |

| | 1923 *թ.* | 1930 | 1932 *թ.* |
|---|---|---|---|
| *մեքենատրակտորային կայանների աճումը* | | 138 | 3100 |

| | 1923 | (1 *հուլիսի)* |
|---|---|---|
| *տրակտորների ընդհանուր թիվը գյուղատնտեսության մեջ* | 4,5 *հազար* | 138 *հազար* |

### 7. Բանվոր դասակարգի յեվ աշխատավորության նյութական կացության բարելավումը

| | | |
|---|---|---|
| ա) բանվոր դասակարգի թվի աճումը | 1927 թ. | 1932 թ. |
| (հազարներով) | 11.200 | 21.000 |
| բ) աշխատավարձի ֆոնդի աճումը | 1924 թ. | 1932 թ. |
| (միլիարդ ռուբլիներով) | 4 | 26.8 |
| գ) բանվորական օրվա կրճատումը | 1929 թ. | 1932 թ. |
| անցել են 7 ժամյա բան. օրվա | 12,1 տոկոս | 100 տոկոս. |
| դ) սոցիալական ապահովագրությունը (միլիարդ ռուբլիներով) | 1927—28 թ. | 1932 թ. |
| | 1,0 | 3,5 |
| յե) բնակարանային շինարարութ. | 1925 թ. | 1931 թ. |
| կապիտալ ներդրումներ (միլիոն ռուբ.) | 63 | 575 |
| զ) հասարակական սնունդ | 1929 թ. | 1931 թ. |
| ճաշարանների թիվը | 2400 | 9600 |

## V. ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

*«Կապիտալիզմի ժամանակ չի կարելի վոչնչացնել ազգային (քաղաքական ընդհանրապես) ճնշումը: Դրա համար անհրաժեշտ ե վոչնչացնել դասակարգերը այսինքն՝ մտցնել սոցիալիզմ» (Լենին)։*

*«Խորհրդային հանրապետությունը կառուցվում ե խորհրդային ազգային հանրապետությունների ազատ ազգերի ազատ միության, ինչպես ֆեդերացիա (դաշինք, միություն) հիման վրա» (Խորհուրդների 2-րդ համագումար)։*

1. *Ազգային հանրապետությունների բյուջեյի աճումը 1931 թվին՝ 1930 թվի համեմատությամբ*

| | | |
|---|---|---|
| ԽՍՀՄ | 45,8 | տոկոս |
| ՌԽՖՍՀ | 31,2 | » |
| ՈւԽՍՀ | 32,9 | » |
| ԲԽՍՀ | 35,6 | » |
| ԱԽՖՍՀ | 50,9 | » |
| Թուրքմեն. ԽՍՀ | 87,1 | » |
| Ուզբեկ. ԽՍՀ | 61,8 | » |
| Տաջիկ. ԽՍՀ | 80,5 | » |

### 2. Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը

*Ուզբեկ. ԽՍՀ*—1931 *թ. յերկու ու կես անգամ ավելի յե նախապատերազմյանից,*

*Անդրկովկաս*—1930 *թ. նկատմամբ* 1931 *թ. ընդհանուր արտադրանքը կազմում ե* 170 *տոկոս.*

*Տաջիկ. ԽՍՀ*—1930 *թ.*—10,8 *միլիոն ռուբլի,* 1931 *թվին*—32 *միլիոն ռուբլի.*



### 3. Ազգային հանրապետությունների գյուղատնտեսությունը սոցիալիզմի ճանապարհին

*կոլեկտիվացված գյուղացիական տնտեսությունների տոկոսը* 1930 *թվի գարնանը.*

| | | |
|---|---|---|
| ՈւԽՍՀ | 67 | տոկոս |
| ԲԽՍՀ | 50 | » |
| ԱԽՖՍՀ | 40 | » |
| Ուզբեկ. ԽՍՀ | 68,7 | » |
| Թուրքմ. ԽՍՀ | 67 | » |

### 4. Խորհրդային Ուկրաինայում

#### ա) ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

| | |
|---|---|
| 1924 թ. | 53,5 միլիոն ռուբլի |
| 1931 թ. | 826 միլիոն ռուբլի |

#### բ) ԵԼԵԿՏՐՈ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

| | |
|---|---|
| 1924 թ. | 3,7 միլիոն ռուբլի |
| 1931 թ. | 249,1 միլիոն ռուբլի |

#### գ) ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

| | |
|---|---|
| 1930 թ.—47, ընդգրկելով | 952 հազար հեկտար |
| 1932 թ.—(հուլիս)—448,—ընդգրկելով | 13.500 հազար հեկտար |

#### դ) ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

| | | |
|---|---|---|
| Սովորողների թիվը ստորին, միջնակարգ և բարձր դպրոցներում | 1914 թ. 1,648 հազար | 1932 թ. 4,071 հազար |
| Ուկրաիներեն լեզվով | 1928 թ. | 1932 թ. |
| Թերթերի թիվը | 1 | 336 |

### 5. Խորհրդային Բելոռուսիայում

*ա) Բուռն թափերով աճում ե հանրապետական արդյունաբերությունը Արդյունաբերական արտադրանքի աճումը.*

| | | |
|---|---|---|
| 1928—29 թ. | 40,8 | տոկոս |
| 1930 թ. | 51 | » |
| 1931 թ. | 79 | » |

*բ)* 1932 *թ. մայիս* 1*-ին, ցարական Ռուսաստանի կուլտուրապես հետամնաց շրջանից՝ Խորհրդային Բելոռուսիան վերածվեց հիմնականում համատարած գրագիտության յերկրի։*

### 6. Խորհրդային Յակուտիայում

ա) 1922 թվից մինչև 1932 թ. տեղական բյուջեն աճել է ավելի քան 12 անգամ:

բ) Ցանքսադաշտերի աճումը (1922 թ. նկատմամբ տոկոսներով).

1922 թ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . 100 տոկոս
1932 թ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . 174 »

գ) անասունների թվի աճումը (1922 թ. նկատմամբ՝ տոկոսներով)

1922 թ. . . . . . . . . . 100 տոկոս
1932 թ. . . . . . . . . . 141,2 »

դ) 1932 թ. կոլեկտիվացված են տնտեսությունների 43 տոկոսը:

ե) բնակչության գրագիտությունը.

1913 թ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . 2 տոկոս
1932 թ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . 637 տոկոս

# VI ԼԵՆԻՆԻԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

## ԽՍՀՄ յեվ կապիտալիստական աշխարհը հոկտեմբերի 15-րդ տարեդարձին

1. *ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության բուռն աճում, կապիտալիստական աշխարհում տնտեսության քայքայում. աղքատություն և քաղցի աճում.*

ա) կապիտալիստական յերկրների արդյունաբերական արտադրանքը (1926 թիվը վերցրած է 100 տոկոսով)

| | 27 թ. | 28 թ. | 29 թ. | 30 թ. | 31 թ. |
|---|---|---|---|---|---|
| | տոկոսներով | | | | |
| | 105 | 109 | 116 | 101 | 80 |
| ԽՍՀՄ (1925 թ. վերցված է 100 տոկոսով . . . . . . . . . . | — | — | 147 | 170 | 219 |

### բ) ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ 1932 Թ.

Անգլիա . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 2970 հազար մարդ
Գերմանիա . . . . . . . . . . . . . . . . . . . . . 5.225 հազար մարդ

Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1925 թվին արդյունաբերության մեջ զբաղված 100 տոկոսից այժմ 47 տոկոսը գործազուրկ են:

### ԽՍՀՄ-ՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

### գ) ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

| | | |
|---|---|---|
| ՀԱՄՆ (աշխատավարձի վճարման ընդհանուր գումարի ինդեքսը) . . . . . . . . . . | 1925 թ. 100 տոկոս | 1932 թ. (հունիս) 39 տոկոս |
| Գերմանիա (բանվորի շաբաթական աշխատավարձի ինդեքսը) . . . . . . . . . . | 1913 թ. 100 տոկոս | 1932 թ. (հունիս) 64 տոկոս |
| ԽՍՀՄ (աշխատավարձի ֆոնդի աճումը) | 1924 թ. 4 միլիարդ ռ. | 1932 թ. 26,8 միլիարդ ռ. |



# VII. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇԵՄՔԻՆ

*«Մենք յետ ենք մնացել առաջավոր կապիտալիստական յերկրներից 50—100 տարով: Մենք պետք է հասնենք նրանց առաջիկա տասնամյակում: Կամ մենք այդ կանենք, կամ մեզ կճզմեն» (Ստալին):*

## Ինչի համար է ԽՍՀՄ պայքարում հնգամյակի 4-րդ տարում

Ամբողջ ժողովրդական տնտեսության 21 միլիարդ ռուբլու կապիտալ շինարարության ծրագիրը կատարելու համար.

24 դոմենյան վառարաններ գործի գցելու համար.

Արդյունաբերության արտադրանքը 1931 թ. համեմատությամբ 36 տոկոսով աճեցնելու համար.

90 միլիոն տոնն քարածուխ արտադրելու համար.

9 միլիոն տոնն չուգուն ձուլելու համար.

9,5 միլիոն տոնն պողպատ ձուլելու համար.

6,7 միլիոն տոնն պրոկատ բաց թողնելու համար.

17 միլիարդ կիլովատ-ժամ ելեկտրոէներգիա արտադրելու համար.

6,8 միլիարդ ռուբլու մեքենա բաց թողնելու համար, այդ թվում 940 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ.

82,000 տրակտոր բաց թողնելու համար.

73,000 ավտոմոբիլ բաց թողնելու համար.

1.300 շոգեշարժ բաց թողնելու համար.

50.000 ապրանքատար վագոններ բաց թողնելու համար.

3.061 միլիոն մետր բամբակեղեն գործվածքներ բաց թողնելու համար.

91,5 միլիոն զույգ կոշիկ բաց թողնելու համար.

Մի միլիարդ տուփ պահածոներ բաց թողնելու համար.

Արդյունաբերական բանվորների աշխատավարձը 11 և յերկաթուղայիններինը 13 տոկոսով ավելացնելու համար.

Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը 22 տոկոսով բարձրացնելու համար.

Արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը 7 տոկոսով իջեցնելու համար

1700 նոր մեքենա-տրակտորային կայանների համար.

144 միլիոն հեկտար ցանքսադաշտերի համար.

2,437 հազար հեկտար բամբակի ցանքսի համար.

2,560 հազար հեկտար կտավատի ցանքսի համար.

1,670 հազար հեկտար ճակնդեղի ցանքսի համար.

Բերքատվության բարձրացման համար—հացահատիկային մշակույթներինը մինչև 8,5 ցենտներ յուրաքանչյուր հեկտարից, շաքարի ճակնդեղինը—մինչև 145 ցենտներ հեկտարից. բամբակինը—8,7 ցենտներ հեկտարից. արևածաղկինը—մինչև 6 ցենտներ հեկտարից.

*Հոտերն ավելացնելու համար—«Սկոտովոդի» գծով մինչև 2,950 հազար գլուխ, «Սվինովոդինը»—մինչև 2.900 հազար գլուխ, «Օվցեվոդինը»—մինչև 7300 գլուխ, «Ցուցմինավորմանը»—մինչև 320 հազար կով:*

## 1. «Սոցիալիզմի հաղթանակի յերկու խնդիրները յերկրորդ հնգամյակում»

*ա) «Յերկրորդ հնգամյակի քաղաքական խնդիրն է կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիան, լիովին վերացումն այն պատճառների, վորոնք դասակարգային տարբերություն և շահագործում են ծնում և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումը անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողների»:*

*բ) Յերկրորդ հնգամյակի հիմնական և վճռական տնտեսական խնդիրն է հանդիսանում ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը, նորագույն տեխնիկական բազայի ստեղծումը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների համար» (Համ. կկ (բ) 17-րդ կոնֆերանս):*

## 2. Արդյունաբերական արտադրանքի աճումն 2-րդ հնգամյակի վերջին (ոիենտիր) միջին հաշվով տարեկան 20 տոկոս աճումով

1932 *թ.* . . . . . . . . . . . . . . . . . . . . 100 *տոկոս*
1937 *թ.* . . . . . . . . . . . . . . . . . . . . 250 *տոկոս*

## 3. Ջուլուճի արտադրությամբ հաստատուն բռնել յերկրորդ տեղն աշխարհում

*Ջուլուճի ձուլումն իր զարգացման լավագույն տարիներին.*

*ՀԱՄՆ* . . . . . . . . . . . . . . . . . . 43 *միլիոն տոնն*
*Գերմանիա* . . . . . . . . . . . . . . . . 13,3 *միլիոն տոնն*
*Ֆրանսիա* . . . . . . . . . . . . . . . . 10,0 *միլիոն տոնն*
*Անգլիա* . . . . . . . . . . . . . . . . . 7,0 *միլիոն տոնն*
*ԽՍՀՄ* 1937 *թ. կձուլի* 22 *միլիոն տոնն:*

## 4. Ածուխի արտադրությամբ բռնել յերրորդ տեղն աշխարհում

### ՔԱՐԱԾԽԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*ՀԱՄՆ* 1929 *թ.* . . . . . . . . . . . . . . . 546 *միլիոն տոնն*
*Անգլիան* . . . . . . . . . . . . . . . . . 260 *միլիոն տոնն*
*ԽՍՀՄ* 1937 *թ. պիտի արտադրի* . . . . . . . . 250 *միլիոն տոնն*



## 5. Տրակտորների յեվ ելեկտրոեներգիաների արտադրությամբ հասնել Ամերիկային

### ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

*ա) ՀԱՄՆ* 1929 *թ. արտադրել է* . . . . . 229 *հազար տրակտոր*
*ԽՍՀՄ* 1937 *թ. կարտադրի* . . . . . . . . 170 *հազար տրակտոր*

### ԵԼԵԿՏՐՈԵՆԵՐԳԻԱ

*բ) ՀԱՄՆ* 1929 *թ.* . . . . . . . . . . . . . 117 *միլիարդ կիլովատ ժամ*
*ԽՍՀՄ* 1937 *թ.* . . . . . . . . . . . . . . 100 *միլիարդ կիլովատ ժամ*

*6. Ավելացնել բնակչության ապահովումը հիմնական սպառողական ապրանքներով վոչ պակաս քան յերկու-յերեք անգամ՝ առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ:*

*ա) բամբակեղեն գործվածքների արտադրանքի աճումը.*

1932 *թ.* . . . . . . . . . . . . . . . . . . . . 3,061 *միլիոն մետր*
1937 *թ.* . . . . . . . . . . . . . . . . . . . . 7,147 *միլիոն մետր*

*բ) կանեփի արտադրության աճումը.*

1932 *թ.* . . . . . . . . . . . . . . . . . . . . 180 *միլիոն մետր*
1937 *թ.* . . . . . . . . . . . . . . . . . . . . 1,200 *միլիոն մետր*

*գ) կոշիկի արտադրությամբ ԽՍՀՄ յերկրորդ հնգամյակում կհասնի Ամերիկային և կանցնի բոլոր մյուս յերկրներից:*

*դ) Արհեստական մանվածքի մշակումով ԽՍՀՄ կբռնի առաջին տեղն աշխարհում.*

*Յերկրորդ հնգամյակը կապահովի ԽՍՀՄ տնտեսական ինքնուրույնությունը, պաշտպանելով նրան համաշխարհային կապիտալիստական տնտեսության կցորդը լինելուց:*

## VIII. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՅԵԼՔ Է ՎՈՐՈՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ. ԱՎԵԼԻ ԱԶԱԼՐՋՈՐԵՆ ՊԱՀՊԱՆԻՐ ՀԱՂԹԱՆԱԿՈՂ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

*Այս յեզրափակիչ բաժինը հանձնարարվում է կահավորել վորպես ագիտպլակատ՝ Կարմիր բանակայինի խոշոր նկարով, վորը պահպանում է հոկտեմբերի նվաճումները: Այդ ագիտպլակատի ծայրերում դիագրամայի պես տեղավորել ստորև բերված տվյալները իմպերիալիստների կողմից պատերազմի պատրաստության մասին:*

*Բացի այդ, ցանկալի յե հենց այդ տախտակի վրա ներքևում տալ բաժին՝ «մենք պատրաստ ենք ԽՍՀՄ պաշտպանության համար», տալով այնտեղ զորամասի հիմնական նվաճումների ցուցանիշները հոկտեմբերի 15-րդ տարեդարձին:*

1. ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ (ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐՆԵՐՈՎ

| | 1913 | 1930 |
|---|---|---|
| Անգլիա | 375 | 535 |
| Ֆրանսիա | 3148 | 455 |
| Իտալիա | 679 | 259 |
| Ճապոնիա | 95 | 232 |
| ՀԱՄՆ | 244 | 727 |

2. ՄԵՐ ՄՈՏԱԿԱ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ԲԱՆԱԿՆԵՐԻ ԹԻՎԸ

| | |
|---|---|
| 1923 թ. | 491,500 մարդ |
| 1931 թ. | 574.000 մարդ |

3. ՀԻՆԳ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՖՐԱՆՍԻԱ, ԻՏԱԼԻԱ, ԱՆԳԼԻԱ ՀԱՄՆ ՅԵՎ ՃԱՊՈՆԻԱ) ԲԱՆԱԿՆԵՐԻ ԹԻՎԸ

| | |
|---|---|
| 1914 թ. | 4.754 հազար մարդ |
| 1931 թ. | 4,372 հազար մարդ |

4. ԱՅԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՌՄԲԱԿՈԾՄԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻ ԹՌԻՉՔԸ ՏՈՆՆ ՌՈՒՄԲԵՐՈՎ

| | |
|---|---|
| 1923—24 թ. | 540 |
| 1932 թ. | 2,400 |

Ծանոթություն.—*Դիագրամներ կազմելը հեշտացնելու համար այստեղ բոլոր թվեր տրված են կլորացված։*





## ԱՆՑՔԵՐԻ ՕՐԱԳԻՐ

1917 թվի հոկտեմբեր—նոյեմբերի (*օգտագործելու համար հեղափոխական օրացույցում*):

1-ին հոկտեմբերի. 1. *Ժամանակավոր կառավարության կողմից ցրվում է Բալթիկ նավատորմի կենտրոնական կոմիտեն:*

2. *Պետրոգրադում կայացավ գյուղացիական պատգամավորների խորհուրդների խորհրդակցությունը:*

2-ին հոկտեմբերի. 1. *Բանվորական պատգամավորների Մոսկվայի խորհուրդն ընտրեց բոլշևիկյան գործադիր կոմիտե:*

2. *Տագանրոգի մարզում տեղի ունեցան խոշոր ագրարային անկարգություններ:*

4-ին հոկտեմբերի. 1. *բանվորների և զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհուրդը բանաձև ընդունեց դեմոկրատական խորհրդակցության նկատմամբ բացասական վերաբերմունքի և մասսաներին բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորական խորհուրդների շուրջ համախմբելու անհրաժեշտության մասին:*

2. *Դաշքենդում բռնկվեց ընդհանուր գործադուլ: Գործադուլը ճնշելու համար կազակներ են բերվում և ռազմական դրություն է մտցվում:*

3. *Բանվորների և զինվորների պատգամավորների Ոդեսայի Խորհուրդը որոշում ընդունեց կարմիր գվարդիա կազմակերպելու մասին:*

5-ին հոկտեմբերի. 1. *Ժամանակավոր կառավարությունը փոխեց իր որոշումը Ցենտրոֆլոտի ցրման մասին:*

2. *Բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների Վիբորգի (Պետրոգրադ) խորհուրդը որոշեց պահանջել Համառուսական Կենտգործկոմից անմիջապես խորհուրդների համագումար հրավիրել վճռելու համար իշխանության հարցը:*

6-ին հոկտեմբերի. 1. *Յերկաթուղայինների կենտրոնական գործադուլային կոմիտեն հայտարարեց համառուսական յերկաթուղային գործադուլ:*

7-ին հոկտեմբերի. 1. *Կայացավ ՌՍԴԲԿ կենտրոնական և Պետրոգրադի կոմիտեների միացյալ նիստ դեմոկրատական խորհրդակցության բոլշևիկ-անդամների մասնակցությամբ՝ դնելով ընկ. Բուխարինի զեկուցումը ընթացիկ մոմենտի մասին:*

6. Մոսկվայում բուրժուազիան ձեռնամուխ է լինել սպիտակ գվարդիա կազմակերպելուն:

**7-րդ Զրույցը.** Զինված հարձակում և պրոլետարիատի հեղափոխության հաղթանակ:

2. Խորհուրդների 2-րդ համագումարը:

3. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ընտրությունը:

ԳՐԱԴԱՐԱՆ

Պետհրատի տպարան — Սրբագրիչ՝ Ռ. Գասպարյան

Գլավլիտ 7667 (բ) — Պատվեր 3268 — Տիրաժ 500

Հանձնված է արտադրության 21 նոյեմբերի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 27 նոյեմբերի 1932 թ.



20

ՀՀ Ազգային գրադարան
NL0866624

11
26118